# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 958-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005 թվականի թիվ 2408-Ն որոշման հավելված 1-ի սահմանված կարգի 19-ից 22 կետերով և հիմք ընդունելով կառուցապատողի կողմից 13.07.2026թ. տրված ՇԹԴ/102/17428-26 դիմում-հայտը.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Բավարարել «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից տրված դիմում-հայտը և երկարաձգել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Արցախի փողոց 36/2 հողամաս հասցեում շարժական կապի TCH01 կայանի կառուցման աշխատանքների կատարման նպատակով Ճամբարակ համայնքի կողմից 19.04.2024 թվականին տրված 11-Շ շինարարության թույլտվության ժամկետը:
2. Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ կառուցապատողը պարտավոր է դիմել Ճամբարակ համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք. Ճամբարակ